Հաստատված է «Մեկ երեխա-մեկ համակարգիչ»

ծրագրի կառավարման աշխատանքային խմբի

20.04.2016 թ-ի նիստով

«Մեկ երեխա-մեկ համակարգիչ» ծրագրի փորձնական փուլի կառավարման մոդել

Սույն կառավարման մոդելը մշակված է ՀՀ կառավարության՝ 09.04.2015թ. N 15 արձանագրային որոշմամբ հաստատված <<Մեկ երեխա-մեկ համակագիչ>> ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) համաձայն, ըստ որի. <<կմշակվի Ծրագրի փորձնական փուլի կառավարման մոդել: Ելնելով Ծրագրի նպատակների կրթական բնույթից և ուղղվածությունից՝ Ծրագրի կառավարումը հանդիսանում է ՀՀ ԿԳ նախարարության լիազորությունը: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կստեղծվի Ծրագրի կառավարման աշխատանքային խումբ՝ փորձնական փուլի ընթացիկ կառավարումը և մասնակից կողմերի միջև աշխատանքների համակարգումը իրականացնելու նպատակով>>:

Կառավարման մոդելի ձևավորման հիմնական սկզբունքներն են.

1. Ծրագրի կառավարման մոդելը հիմնված է Ծրագրի բոլոր շահառուների սերտ համագործակցության սկզբունքի վրա:
2. Ծրագրի ընթացիկ կառավարումը իրականացվում է Դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից:
3. Ծրագրի կառավարման մոդելը հիմնված է թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների վրա, որը կապահովվի ծրագրի պատշաճ գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:
4. Ծրագրի կառավարումը հանդիսանում է ՀՀ կրթության և գիտության նախարարության լիազորությունը:
5. Ծրագրի ընթացքի արտաքին մշտադիտարկումը, արդյունավետության գնահատումն ու իրականացման ընթացքում անհրաժեշտ խորհրդատվության

տրամադրումն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ստեղծված աշխատանքային խումբը (այսուհետ՝ Աշխատանքային խումբ):

6. Աշխատանքային խումբը բաղկացած է հետևյալ կառույցների ներկայացուցիչներից.
    - ՀՀ կրթության և գիտության նախարարություն – երկու ներկայացուցիչ, որոնցից մեկը հանդիսանում է աշխատանքային խմբի ղեկավար,
    - Դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամ – երկու ներկայացուցիչ
    - ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ ՊՓԲԸ – մեկ ներկայացուցիչ
    - ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ – մեկ ներկայացուցիչ
    - Վայոց ձորի մարզպետարանի կրթության վարչություն – մեկ ներկայացուցիչ
    - Մայքրոսոֆթ ընկերության հայաստանյան գրասենյակ – մեկ ներկայացուցիչ
    - Յունիքոմփ ՓԲԸ – մեկ ներկայացուցիչ:
7. Աշխատանքային խմբի հանդիպումները կազմակերպվում են Հիմնադրամի նախաձեռնությամբ՝ տարեկան առնվազն մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության այլ պարբերականությամբ:
8. Հիմնադրամը կազմակերպում է ծրագրի փորձնական փուլի իրականացման մշտադիտարկման գործընթացը՝ հատուկ մշակված գործիքակազմով և Աշխատանքային խմբին ներկայացնում է դրա արդյունքները:
9. Աշխատանքային խումբը քննարկում է ծրագրի փորձնական փուլի իրականացման մշտադիտարկման արդյունքները և առաջարկություններ ներկայացնում իրականացման գործընթացի հետագա բարելավման ուղղությամբ ըստ անհրաժեշտության:
10. Աշխատանքային խումբը, Ծրագրի փորձնական փուլի արդյունքների և ընթացքի մշտադիտարկման նպատակով իրականացնում է ստուգայցեր Վայոց Ձորի դպրոցներ, կազմակերպում քննարկումներ դպրոցների տնօրենների, ուսուցիչների և աշակերտների(աշակերտների ծնողների) մասնակցությամբ:
11. Աշխատանքային խումբը քննարկում և առաջարկություններ է ներկայացնում Հիմնադրամին՝ Ծրագրի հետագա ծավալման ուղղությունների և առաջնահերթությունների վերաբերյալ: